ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 27 հոկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալայանի

Ուսումնասիրելով քաղաքացի Արմեն Մուխսիկարոյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Արմեն Մուխսիկարոյանը 08.10.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ կետի 5-րդ ենթակետի, 26-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 3, 14.1. եւ 47-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հնարավորություն է տալիս դատարանին անտեսել ակնհայտ եւ առերեւույթ ապացույցներն ու նորմերը եւ կիրառել Սահմանադրությանը հակասող նորմը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմերը հնարավորություն են տալիս կիրառել երկակի չափանիշներ, մասնավորապես, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ կետի 5-րդ ենթակետը եւ 26-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը հնարավորություն են տալիս աշխատանքից ազատման հարցին վերաբերել կամայակա-նորեն՝ պայմանավորված որոշում կայացնելու լիազորություն ունեցող անձի սուբյեկտիվ մոտեցմամբ:

Դիմումի եւ դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ այն քողարկելով խնդրո առարկա դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ: Ուստի ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ՝ դատական կազմը գտնում է, որ դիմումի քննությունը ենթակա է մերժման՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացի Արմեն Մուխսիկարոյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝
Անդամներ՝

27 հոկտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-29